ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՄ ԾԱՌԱՆ
SPECIAL TOPIC: MY SERVANT

Սա հարգանքի և կոչման տիտղոս էր (BDB 713):

1. Այն կիրառվում էր հավաքական իմաստով՝
   ա. Նահապետները որպես մի խումբ՝ 2 Օր. 9:27
   բ. մարգարեները՝ 4 Թագ. 9:7, 17:13, Եզրաս 9:11, Երեմ. 7:25, 26:5, 29:19, 35:15, 44:4
   գ. Իսրայելը՝ Սաղմ. 105:6, 136:22, Եսայի 41:8-9, 42:18-19, 44:1,2,21, 45:4, 48:20, 49:3, Երեմ. 30:10, 46:27,28
   դ. Սեպտուագինտան ավելացնում է Եսայի 42:1-ին մի արտահայտություն, որը այն դարձնում է ազգային Իսրայելի իմաստով («Հակոբը իմ ծառան է, ես նրան կօգնեմ. Իսրայելը իմ ընտրյալն է»)
2. Այն կիրառվում էր անհատական իմաստով՝
   ա. Աբրահամ – Ծնն. 26:24, Սաղմ. 105:6
   բ. Հոբ – Հոբ 1:8, 2:3, 42:7,8
   գ. Իսահակ – Ծնն. 24:14
   դ. Հակոբ – 1 Մնաց. 16:13, Սաղմ. 105:6, Եզեկ. 28:25
   ե. Մովսես – Ելից 14:31, Թվոց 12:7-8, 2 Օր. 34:5, Հեսու 1:1-2,7,13,15
   զ. Հեսու – Հեսու 24:29, Դատ. 2:8
   է. Քաղեբ – Թվոց 14:24
   ը. Դավիթ – Եզեկ. 37:25
   թ. Զորաբաբել – Անգ. 2:23
   ժ. Սողոմոն – 3 Թագ. 3:8
   ի. Եսայի – Ես. 20:3, 44:26
   լ. Հիսուս – Մատթ. 12:15-21, մեջբերված է Եսայի 42:1-4-ից

Սա հարգարժան տիտղոս է, որը կիրառվում է Մեսիայի համար Եսայու «Ծառայի երգեր»-ում (տես՝ Ես. 42:1-4, 49:1-6, 50:4-9, 52:13-53:12): Ոմանք այս բոլորը դիտարկում են որպես Իսրայելին վերաբերվող համարներ (տես՝ Ես. 41:8-9, 42:19, 43:10, 44:21), սակայն Ես. 52:13-53:12 նկատի ունի անհատ, կատարյալ իսրայելացու (ուշադրություն դարձրե՛ք Եսայի 53:8): Ծառան չի կարող մեռնել ծառայի մեղքերի համար: Նկատե՛ք Մատթ. 27:38, 59: Աստված է վերահսկում պատմությունը, մարդկանց, ազգերին, և անգամ Սատանային. բոլորը կարող են գործածվել Նրա փրկագործության նպատակների համար (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>): Նա Քրիստոսին էլ գործածեց (տես՝ Եսայի 53:10):

Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնություն գրքի ծանոթագրությունը, հատոր 6, էջ՝ 545, շատ օգտակար է, քանի որ ընդգծում է «Իմ Ծառան» տիտղոսի տարբեր կիրարկումները՝

1. Աստծո ծառան որպես մարգարե, տես՝ Թվոց 12:7-8, Նեեմ. 1:7, Դան. 9:11
   ա. Մովսեսը
   բ. Դանիելը, տես՝ Դան. 9:17
2. Աստծո ծառան որպես ռազմական առաջնորդ (այսինքն՝ Հեսուն), տես՝ Հեսու 24:29, Դատ. 2:8
3. Աստծո ծառան որպես Թագավոր (այսինքն՝ Դավիթը), տես՝ 2 Թագ. 7:5,8, Սաղմոս 18, 36, Եզեկ. 28:25, 37:25
4. Աստծո ծառան որպես կազմակերպիչ՝
   ա. Նեեմիան, տեսէ Նեեմ. 1:6
   բ. Զորաբաբել, տես՝ Անգ. 2:23
5. ամբողջ Իսրայելը (կամ Հակոբը), տես՝ Եսայի 41:8,9, 42:1, 19, 43:10, 44:1,21, 49:3, Եզեկ. 28:25, 37:25
6. Իսրայելի մնացորդը, տես՝ Եսայի 41:8-10

7. աստվածավախ անհատը, տես՝ Հոբ 1:8, 2:3, 42:8
8. անհավատ իշխանները, ովքեր ծառայում են ՅԱՀՎԵԻ նպատակների համար
   ա. Կյուրոսը, Եսայի 44:28, 45:1
   բ. Նաբուգոդոնոսորը, Երեմ. 25:9, 27:6, 43:10